ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» «Դեկտեմբեր» 2022թ. ՆՄՈ/346-2022

ք. Արմավիր

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՊԼԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 218 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «**Տարածքային կառավարման մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի **2012 թվականի ապրիլի 5-ի N 418-Ա** հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզային (Երևան քաղաքի) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանի կառուցվածքը և բովանդակությունը».

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը ՝ համաձայն N 3 հավելվածի.

4) «Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) «Խոշոր հրդեհապայթունավտանգ օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլան»-ը ՝ համաձայն N 5 հավելվածի.

6) «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) «Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) «Համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլան»-ը ՝ համաձայն N 8 հավելվածի.

9) «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը ՝ համաձայն N 9 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Արտակարգ իրավիճակներում Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլանը և պլանի հավելվածները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 512 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 218 որոշումը:

3. Հանրապետության Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը կազմակերպել սույն որոշման համապատասխան հավելվածների ճշգրտումներ տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ, ճշգրտված տարբերակը առաքել ընդգրկված մարմիններին.

2) ճշգրտումներին ներգրավելով բոլոր շահագրգիռ մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում նախապատրաստել պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հանրապետության Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետին (փրկարար ծառայության գնդապետ, Հովհաննես Մարգարյան):

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5/23/2022

VERIFIED OCSP 5/23/2022 09:47:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ